Հավելված 8

«ԱԼՖԱՍԵՔՅՈՒՐԻԹԻԶ» ՍՊԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2024 թվականի II–րդ եռամսյակ

Ծանոթագրություն 1. «Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում»

3.1.1. Իրավական դաշտ.

1) ներդրումային ընկերության հիմնական գործունեությունը,

«Ալֆասեքյուրիթիզ» ՍՊԸ գործառնությունների հիմնական տեսակներ են ՀՀ պարտատոմսերի շուկայում

- ✓ ներդրումային գործունեություն
- ✓ դիլերային և բրոքերային գործառնությունների իրականացում:

2) գործարար միջավայրը,

- ✓ ՀՀ կենտրոնական բանկ
- ✓ ՀՀ բանկեր
- ✓ ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձիք:

3) եթե ներդրումային ընկերության խմբի անդամ է, ապա խմբի իրավական կառուցվածքը:

«Ալֆասեքյուրիթիզ» ՍՊԸ որևէ խմբի անդամ չէ, չունի ներկայացուցչություններ և մասնաճյուղեր:

3.1.2. Կորպորատիվ կառավարում.

«Ալֆասեքյուրիթիզ» ՍՊԸ-ն շահույթ ստանալու նպատակով ներդրումային գործունեություն իրականացնող իրավաբանական անձ է: Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունիսի 27-ի թիվ ԾՕՀ Ա որոշման Ընկերության կանոնադրությունը (նոր խմբագրությամբ) գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում՝ գրանցման վկայական թիվ 8, գրանցման ամսաթիվ՝ 27.06.08թ.:

Համաձայն Ընկերության կանոնադրության Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 350.000.000 ՀՀ դրամ:

Ընկերության ֆիրմային անվանումն է

լրիվ՝ «Ալֆասեքյուրիթիզ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,

կրճատ՝ «Ալֆասեքյուրիթիզ» ՍՊԸ:

Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն ՝ ՀՀ, ք.Երևան, Չարենցի 4 շենք, 46 բն.

1) խորհրդի կառուցվածքը, կազմը,

Ընկերության կառավարման մարմիններ են մասնակիցների ընդհանուր ժողովը և գործադիր տնօրենը: Ընկերության ընդհանուր ժողովի իրավասություններն իրականացնում է ընկերության միակ մասնակիցը, որն իր իրավասությունների սահմաններում ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

2) տնօրինության կառուցվածքը, կազմը,

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Գործադիր տնօրենը: Ընկերության Գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում գործունեության ղեկավարման հարցերը, որոնք Կանոնադրությամբ և Օրենսդրությամբ վերապահված չեն ընդհանուր ժողովի իրավասությանը:

3) սեփականության կառուցվածքը, բաժնետերերի/մասնակիցների քանակը հաշվետու ժամանակաշրջանի վերջում,

«Ալֆասեքյուրիթիզ» ՍՊԸ-ն *30 Հունիսի 2024թ*. դրությամբ ունի մեկ բաժնետեր:

4) նշանակալից մասնակիցների անունները/անվանումները,

«Ալֆասեքյուրիթիզ» ՍՊԸ-ի նշանակալից մասնակիցն է Մարինա Փսոմասը 100 % մասնաբաժնով:

5) ղեկավարների վարձատրության քաղաքականությունը,

Ղեկավարների աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը հանդիսանում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունը:

Ղեկավարների կատարած աշխատանքների գնահատումն իրականացվում է հիմք ընդունելով՝

- ✓ Ընկերության ընթացիկ գործունեության արդյունավետ կառավարումը
- ✓ Ընկերության կապիտալի և ակտիվների շահութաբերության մակարդակները
- ✓ ներքին իրավական ակտերի և այլ որոշումների պատշաճ կատարումը
- ✓ Ընկերության հեռանկարային զարգացման միտումները և այլ:

6) արտաքին աուդիտի վճարները:

Ընկերության 2023թ-ի ֆինանսական գործունեության տարեկան աուդիտը իրականացրել է «Պի Կա Էֆ Աուդիտ սերվիս» ՍՊԸ աուդիտորական խորհրդատվական ընկերությունը:

Ծանոթագրություն 2. «Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը»

Ընկերությունում հաշվապահական հաշվառումն իրականացվել և ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն ՀՀ Կենտրոնական Բանկի Խորհրդի կողմից հաստատված «Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլան»-ի, ՀՀ Կենտրոնական Բանկի Խորհրդի և ՀՀ Ֆինանսների նախարարի համատեղ որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանում փոփոխություններ և լրացումներ»-ի և «Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգ»-ի, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ընկերության կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան:

1) ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը,

«Ալֆասեքյուրիթիզ» ՍՊԸ-ի 2024թ. 2-րդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները կազմված են համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվային ակտերի, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ). հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից ընդունված ստանդարտների և դրանց մեկնաբանությունների:

Ընկերությունն իր ֆինանսական հաշվետվությունները կազմելիս, բացառությամբ դրամական հոսքերի մասին տեղեկատվության, իրականացնում է հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքի հիման վրա, ըստ որի գործառնությունները ճանաչվում են դրանց կատարման պահին և հաշվառման գրանցամատյաններում գրամցվում են ու ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում դրանց կատարման ժամանակաշրջանում:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմված են հետևյալ սկզբունքներին համաձայն.

- ✓ Անընդհատություն. Ընկերությունը չի պատրաստվում դադարեցնել կամ կրճատել իր գործունեությունը տեսանելի ապագայում:
- ✓ Էականություն. Ընկերության ֆինանսական հաշվետվություններում բացահայտված են բոլոր այն տեղեկատվությունները, որոնց չբացահայտումը կարող է ազդել օգտագործողների տնտեսական որոշումներ ընդունելու վրա:
- ✓ Հետևողականությունը. Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը չի փոփոխվում հաշվետու ժամանակաշրջանից մյուսը, եթե էական փոփոխություններ չեն տեղի ունեցել ընկերության գործառնությունների բնույթում:

- ✓ Հաշվեգրում. տնտեսական գործառնությունների արդյունքները գրանցվում են ճանաչման պահին՝ անկախ դրանց հետ կապված դրամական միջոցների վճարման կամ ստացման ժամկետներից և արտացոլվում են այն ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են:
- ✓ Համադրելիություն. Ընկերության տարբեր ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները պետք է համադրելի լինեն:

3) եկամտի և ծախսերի հիմնական տեսակների ճանաչումը,

Ընկերության կողմից գործարքների կատարման ընթացքում ստացված կամ ստացվելիք տոկոսային եկամուտները, ինչպես նաև վճարվելիք տոկոսային ծախսերը Ընկերությունը չափում, ճանաչում և գրանցում է հաշվեգրման եղանակով, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից, հատուցման իրական արժեքով, հաշվեկշռի ամսաթվի դրությամբ, գործարքի ավարտման աստիճանի հիման վրա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ընկերությունը ոչ տոկոսային ծախսերը չափում, ճանաչում և գրանցում է հաշվեգրման սկզբունքով՝ հիմք ընդունելով համապատասխան պայմանագիրը կամ նախորդ ժամանակաշրջանի վճարումները, ընդ որում, ոչ տոկոսային ծախսերի գծով, հաշվեգրումները կատարվում են յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

4) արտարժութային գործառնությունների հաշվառումը,

Ընկերությունը հաշվապահական հաշվառումը վարում և ֆինանսական հաշվետվությունները կազմում և ներկայացնում է ՀՀ արժույթով: Արտարժույթով արտահայտված գործառնությունները Ընկերությունը գրանցում է հաշվետվական արժույթով, կիրառելով գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից տվյալ արտարժույթի նպատմամբ սահմանված փոխարժեքը: Սկզբնական ճանաչումից հետո հոդվածները վերագնահատվում են տվյալ օրվա փակման փոխարժեքով:

5) հարկեր (ընթացիկ և հետաձգված),

Ընկերությունում շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, եկամտահարկի, գույքահարկի, հողի հարկի, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով հաշվառումը տարվում է ՀՀ հարկային օրենսդրությանը համապատասխան:

Հաշվետվու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից:

Ընթացիկ շահութահարկի գումարը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համաձայն՝ յորաքանչյուր ամսվա համար հաշվեգրվում է շահութահարկի պարտավորությունը շահույթի նկատմամբ, հաշվետու տարվա վերջին այն ճշգրտվում է և հաշվանցվում շահութահարկի գծով կատարված կանխավճարների հետ:

Հետաձգված հարկերը առաջանում են ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած ժամանակավոր տարբերություններից: Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գծով, եթե առկա են այդպիսիք, մասհանումները կատարվում են ամբողջությամբ: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այն չափով, որքանով որ հավանական է տվյալ ակտիվների իրացումը: Շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են:

6) ֆինանսական գործիքների ճանաչումը և գնահատումը,

Ընկերության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ շահույթ կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռք բերման պահին՝ Ընկերության ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա, ինչպես նաև առաջնորդվում է ՀՀ կենտրոնական բանկի որոշումներով, կարգերով, հրամաններով, մեթոդական ուղեցույցերով և հաշվապահական միջազգային ստանդարտներով:

7) դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (բացահայտում են այն քաղաքականությունը, որը կիրառվում է դրամական միջոցների և դրանց համարժեքների կազմը որոշելիս),

Ընկերության կանխիկ դրամական միջոցների փաստացի ներհոսքի (մուտքագրումը) և կամ արտահոսքի (ելքագրումը) ձևակերպումը կատարվում է արժույթների անվանական արժեքով՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատշաճ կերպով կազմված վճարահաշվարկային փաստաթղթերի հիման վրա:

8) Շահույթի կամ վնասի միջոցով չափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Այն ֆինանսական ակտիվները, որոնք չեն համապատասխանում հետագայում ամորտիզացված արժեքով չափվելու կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու չափանիշներին, սկզբնական ճանաչումից հետո դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով չափվող:

9) Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն իրագործվում է թե՛պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հավաքագրելու և թե՛ ֆինանսական ակտիվների վաճառքի միջոցով և ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները նախատեսում են որոշակի ամսաթվերին դրամական միջոցների հոսքերի առաջացում, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե կազմակերպության բիզնես մոդելով նախատեսվում է այն պահել պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու նպատակով, և պայմանագրային դրամական հոսքերը համարվում են բացառապես մայր գումար և չմարված մայր գումարի նկատմամբ հաշվառվող տոկոսներ: Տոկոս է համարվում ժամանակի և պարտքային ռիսկի դիմաց հատուցումը, և մասնավորապես, եթե վճարման ուշացումը չի առաջացնում պայմանագրով նախատեսված լրացուցիչ հատուցում, ապա դա չի համարվում բացառապես տոկոսի և մայր գումարի վճարում:

Ընկերության կողմից որպես իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվներ են դասակարգվում ՀՀ պետական պարտատոմսերը, կորպորատիվ պարտատոմսերը և բաժնային գործիքները, իսկ փոխառություններն ու երաշխավորությունները՝ ամորտիզացված արժեքով չափվող:

10) ռեպո համաձայնագրերով գործառնություններ,

Ռեպո համաձայնագրերով ստացված արժեթղթերը հաշվառվում են արտահաշվեկշռում՝ որպես տրամադրած փոխառությունների դիմաց ապահովություն: Ռեպո համաձայնագրերով տրված գումարները հաշվառվում են որպես տրամադրված փոխառություններ: Դրանց գծով ստացվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես եկամուտ: Ռեպո համաձայնագրերով տրված արժեթղթերը հաշվառվում են հաշվեկշռում: Ռեպո համաձայնագրերով ստացված գումարները հաշվառվում են որպես ստացված փոխառություններ: Դրանց գծով վճարվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս:

11) վարկեր և փոխառություններ բանկերին, այլ ֆինանսական կազմակերպություններին, հաճախորդներին,

12) վարկերի և տրամադրված այլ փոխառությունների արժեզրկման գծով կորուստների որոշման և անհուսալի վարկերի և տրամադրված այլ փոխառությունների դուրսգրման հիմունքը,

13) տոկոսների հաշվեգրման դադարեցումը,

Գործող պայմանագրերի շրջանակներում տոկոսների հաշվեգրումը դադարում է, երբ կա բավարար հիմք կարծելու, որ դրանք չեն հավաքագրվի:

14) հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցները որպես ակտիվ հաշվառվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով) ՀՀ դրամով: Արտարժույթով ձեռք բերված հիմնական միջոցները գրանցվում են ձեռք բերման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքով և հետագայում՝ փոխարժեքի փոփոխման դեպքում չեն վերագնահատվում: Հիմնական միջոցի օգտակար ծառայության ընթացքում դրանց մաշվածության գումարը պարբերաբար բաշխվում է և ճանաչվում է որպես ծախս: Ընկերության հիմնական միջոցները որպես շենքեր, գրասենյակային սարքավորում կամ կապի ու հաղորդակցության միջոցներ, հաշվողական, համակարգչային, ավտոմատ կառավարման այլ տեխնիկա, այլ հիմնական միջոցներ հաշվառման նպատակով դասակարգելիս առաջնորդվում է՝ ելնելով դրանց օգտագործման նշանակությունից և նպատակներից:

Ընկերությունում կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը, որի հիմքում ընկած է ակտիվի օգտակար ծառայության ժամկետը: Կիրառվել են մաշվածության հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

Հիմնական միջոցներ	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)	Տարեկան տոկոսադրույք (%)
Շենքեր	20	5
Գույք և գրասենյակային սարքավորումներ	3 - 8	33.3 - 12.5
Կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմոտ կառավարման այլ տեխնիկա	1 – 5	100 - 20
Փոխադրամիջոցներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	3 -8	33.3 - 12.5

Վարձակալություն

Ընկերությունն իր գործունեությունն ապահովելու նպատակով կարող է վարձակալել հող,շենք և տարածքներ, այլ հիմնական միջոցներ, ինչպես նաև դրանց գծով կատարել կապիտալ ներդրումներ: Ընկերության գրասենյակը գործում է վարձակալած տարածքներում: Ընկերությունը, համաձայն ՖՀՄՍ 16-ի պահանջների, վարձակալած տարածքների համար ճանաչել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ՝ կիրառելով օգտագործվող լրացուցիչ փոխառության տոկոսադրույք:

Ոչ նյութական ակտիվները սկզբնապես չափվում են սկզբնական արժեքով:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարը պարբերաբար բաշխվում է օգտակար ծառայության ընթացքում: Ամորտիզացիայի հաշվարկի համար կիրառվում է գծային մեթոդը և յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար հաշվարկված ամորտիզացիայի գումարը ճանաչվում է ծախս: Ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմում է ակզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությունը:

15) հաճախորդների միջոցներ,

Հաճախորդի միջոցները հաշվառվում են հետհաշվեկշռային հաշիվներով և չեն արտացոլվում ընկերության հաշվեկշռում:

16) կապիտալ և էմիսիոն եկամուտ,

Ընկերության բաժնեմասերի անվանական արժեքների հանրագումարը դասակարգվում է որպես կանոնադրական կապիտալ: Եթե նոր բաժնեմասերի վաճառքի արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնեմասերի անվանական արժեքը, ապա տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար կամ էմիսիոն եկամուտ (հակառակ դեպքում՝ որպես զեղչ)

17) փոխանակման փոխարժեքի որոշման մեթոդաբանությունը,

Փոխանակման փոխարժեքը որոշվում է՝ Ընկերության տնօրենի կողմից՝ ֆինանսական շուկայում տիրող իրավիճակից ելնելով:

18) ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվանցումը,

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և զուտ գումարը բացահայտվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու ճանաչված գումարները և կա մտադրություն վերջնահաշվարկն իրականացնել զուտ հիմքով, կամ իրացնել ակտիվն ու մարել պարտավորությունը միաժամանակ:

19) ֆինանսական ակտիվների վերադասակարգումները,

Ֆինանսական ակտիվների վերադասակարգումը կատարվում է այն դեպքում, երբ տեղի է ունեցել սկզբնական գնահատականներում փոփոխություն և վերադասակարգման արդյունքում ֆինանսական հաշվետվությունները կլինեն առավել արժանահավատ:

Ստորև ծանոթագրությունները ներկայացված են ՀՀ հազար դրամով:

Ծանոթագրություն 3. «Տոկոսային և նմանատիպ եկամուտներ»

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ		
Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից	592.00	262.00
Տոկոսային եկամուտներ արժեթղթերից	326,936.00	217,117.00
Տոկոսային եկամուտներ ռեպո համաձայնագրերից		77,397.00
Տոկոսային եկամուտներ փոխառություններից		
Այլ տոկոսային եկամուտներ		
Ընդամենը	**327,528.00**	**294,776.00**
Տոկոսային և նմանատիպ ծախսեր		
Տոկոսային ծախսեր ներգրավված փոխառությունների և ստացված վարկերի դիմաց	(113.00)	-
Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերի գծով	(315,178.00)	(331,297.00)
Այլ տոկոսային ծախսեր	(337.00)	(573.00)
Ընդամենը	**(315,628.00)**	**(331,870.00)**
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	**11,900.00**	**(37,094.00)**

Ծանոթագրություն 4. «Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր»

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		
Միջնորդավճարների գծով ծախսեր	(331.00)	(322.00)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	**(331.00)**	**(322.00)**

Ծանոթագրություն 5. «Եկամուտ շահաբաժիններ»

Շահաբաժիններ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Սովորական բաժնետոմսերի գծով հայտարարված շահաբաժիններ		
Սովորական բաժնետոմսերի գծով վճարված շահաբաժիններ		
Արտոնյալ բաժնետոմսերի գծով հայտարարված շահաբաժիններ		
Արտոնյալ բաժնետոմսերի գծով վճարված շահաբաժիններ		
Ընդամենը	**0.00**	**0.00**

Ծանոթագրություն 6. «Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից»

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Առևտրական նպատակներով պահվող ներդրումներից զուտ եկամուտներ		
Ծահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների առք ու վաճառքից զուտ եկամուտ		
Ծահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ		
Ընդամենը	**0.00**	**0.00**
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ եկամուտներ		
Վաճառքի համար մատչելի ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ	19,072.00	4,078.00
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ		
Ընդամենը	**19,072.00**	**4,078.00**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներից զուտ եկամուտներ		
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ		
Ընդամենը	**19,072.00**	**4,078.00**
Արտարժութային գործառնություններից զուտ եկամուտներ		
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ		
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ		
Ընդամենը	**0.00**	**0.00**
Այլ ոչ տոկոսային եկամուտ		
Ընդամենը զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	**19,072.00**	**4,078.00**

Ծանոթագրություն 7. «Այլ գործառնական եկամուտ»

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Այլ գործառնական եկամուտ		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ	(222.00)	356
Այլ եկամուտներ		1819
Ընդամենը	**-222.00**	**2,175.00**

Ծանոթագրություն 8. «Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին»

Ներդրումների գծով	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Պահուստի սկզբնական մնացորդ		
Պահուստին կատարված մասհանումներ		
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		
Պահուստի վերջնական մնացորդ	**0.00**	**0.00**

Ծանոթագրություն 9. «Ընդհանուր վարչական ծախսեր»

Ընդհանուր վարչական ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով	(59,202.00)	(29,755.00)
Գործուղման և ուսուցման գծով ծախսեր	(225.00)	
Անձնակազմի այլ ծախսեր		
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	(6,000.00)	(6,000.00)
Ներդրումային ընկերության շենքի և սարքավորումների, փոխադրամիջոցների տեխնիկական սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(517.00)	(530.00)
Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	(400.00)	(400.00)
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	(846.00)	(538.00)
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	(638.00)	(469.00)
Տրանսպորտային ծախսեր	(896.00)	(802.00)
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	(608.00)	(384.00)
Այլ վարչական ծախսեր	(18.00)	(25.00)
Հասարակական կապերի գծով ծախսեր		
Ընդամենը	**(69,350.00)**	**(38,903.00)**

2024 թվականի Հունիսի 30-ի դրությամբ «Ալֆասեքյուրիթիզ» ՍՊԸ ներդրումային ընկերության աշխատակիցների թվաքանակը կազմել է 13 մարդ: Մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձի չափն է մոտ 500 000 ՀՀ դրամ:

Ծանոթագրություն 10. «Այլ գործառնական ծախսեր»

Այլ գործառնական ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր	(3,058.00)	(3,401.00)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր		
Այլ ծախսեր		
Ընդամենը	**(3,058.00)**	**(3,401.00)**

Ծանոթագրություն 11. «Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ (վնաս)»

Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ եկամուտ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ընդամենը	**0.00**	**0.00**

Ծանոթագրություն 12. «Շահութահարկի գծով ծախս»

Շահութահարկի գծով ծախս	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընդամենը		

- Համաձայն ՀՀ Հարկային Օրենսգրքի շահութահարկի գումարը հարկվող գումարի նկատմամբ հաշվարկվում է 18 տոկոս դրույքաչափով,
- շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

	Հաշվետու ժամանակաշրջան	Արդյունավետ դրույքաչափ (%)	Նախորդ ժամանակաշրջան	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթը մինչև հարկումը	-	-	-	-
Շահութահարկը դրույքաչափով	-	18	-	18
Հարկման նպատակով եկամուտների և ծախսերի ճշգրտումներ ոչ ժամանակավոր տարբերությունների գծով	-	18		18
Չհարկվող եկամուտներ	-	-		-
Չնվազեցվող ծախսեր	-			
Շահույթը մինչև հարկումը	-	-		-
Շահութահարկը դրույքաչափով	-	18		18
Շահութահարկի գծով ծախս	-			

- Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկը.

	Մնացորդը նախորդ ժամանակ աշրջանի դրությամբ	Այլ համապարփակ Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	Մնացորդը հաշվետու ժամանակա-շրջանի դրությամբ
Հիմնական միջոցների գծով				
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն				

Ծանոթագրություն 14 «Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում»

- «Ալֆասեքյուրիթիզ» ՍՊԸ-ն գործարքներն իրականացնում է բացառապես անկանխիկ եղանակով:
- Դրամական հոսքերի մասին հաշվետվության» մեջ «Դրամական միջոցների և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում/վերջում» տողում ներառված են ՀՀ բանկերում թղթակցային հաշիվները :

Ծանոթագրություն 15. «Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ»

Ընթացիկ հաշիվներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Հայաստանի Հանրապետության բանկերում	20,865.00	10,619.00
Դեպոնացված հաշիվներ բանկերում		
Հաշվեգրված տոկոսներ		
Ընդամենը	**20,865.00**	**10,619.00**
Տրամադրված փոխառություններ և ավանդներ, այլ պահանջներ		
Բանկերում տրամադրված փոխառություններ և ավանդներ, ռեպո (հետգնման) համաձայնագրեր		
Հաշվեգրված տոկոսներ		
Ընդամենը	**0.00**	**0.00**
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ		
Զուտ պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**20,865.00**	**10,619.00**

2024թ. Հունիսի 30-ի դրությամբ «Ալֆասեքյուրիթիզ» ՍՊԸ-ի ընթացիկ հաշիվների ընդհանուր գումարը ՀՀ բանկերում կազմում է 20 865 հազար ՀՀ դրամ, և այն օգտագործման որևէ սահմանափակման առկայություն չկա:

Ծանոթագրություն 16. «Պահանջներ հաճախորդների նկատմամբ»

Պահանջներ հաճախորդների նկատմամբ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
ռեպո (հետգնման) համաձայնագրեր	0.00	0.00
այլ		
Հաշվեգրված տոկոսներ	0.00	0.00
Ընդամենը պահանջներ	**0.00**	**0.00**
Հաճախորդների նկատմամբ պահանջների հնարավոր կորուստների պահուստ		
Ընդամենը զուտ պահանջներ	**0.00**	**0.00**

Ծանոթագրություն 17. «Ծահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ»

Պետական արժեթղթեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
ՀՀ պետական արժեթղթեր, այդ թվում		
գանձապետական պարտատոմսեր	125,659.00	367,657.00
կենտրոնական բանկի պարտատոմսեր		
այլ		
Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր		
Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր		
Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող պետական արժեթղթեր	**125,659.00**	**367,657.00**

Ծանոթագրություն 18. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ»

Պետական արժեթղթեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
ՀՀ պետական պարտատոմսեր գանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր	3,100,386.00	2,112,455.00
Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր		
Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր		
Ընդամենը պետական արժեթղթեր	**3,100,386.00**	**2,112,455.00**

Ծանոթագրություն 19. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Պետական արժեթղթեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
ՀՀ պետական պարտատոմսեր գանձապետական պարտատոմսեր կենտրոնական բանկի պարտատոմսեր	4,672,008.00	4,690,933.00
Հաշվեգրված տոկոսներ	122,910.00	124,201.00
Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր		
Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր		
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեզրկում (հնարավոր կորուստների պահուստ)		
Զուտ ներդրումներ մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներում	**4,794,918.00**	**4,815,134.00**

Ծանոթագրություն 20. «Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում» - հաշվետու տարում այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներ չեն արվել:

Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումները	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Մնացորդը ժամանակաշրջանի սկզբում		
Ավելացում		
Օտարում (վաճառք)		
Արժեքի արժեզրկում		
Մնացորդը ժամանակաշրջանի վերջում		

Ծանոթագրություն 21. «Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»:

Հոդվածի անվանումը	Համակ. և կապի միջոցներ	Փոխա-դրամիջոցներ	Գույք և գրա-սենյակային սարքա-վորումներ	Հիմն.միջ.գծով կապ. ներդ.	Համա-կարգչային ծրագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Մնացորդն առ 31.12.2023թ.	**12,517.00**	**38,028.00**	**12,386.00**	**5,350.00**	**198.00**	**68,479.00**
Ավելացում						**0**
Օտարում (վաճառք)	(1,654.00)		(1,100.00)			(2,754.00)
Արժեզրկում						0.00
Մնացորդն առ 30.06.2024թ.	**10,863.00**	**38,028.00**	**11,286.00**	**5,350.00**	**198.00**	**65,725.00**
Կուտակված մաշվածություն						
Մնացորդն առ 31.12.2023թ.	**12,079.00**	**12,673.00**	**9,238.00**	**4,191.00**	**198.00**	**38,379.00**
Ավելացում	128.00	2,376.00	286.00	267.00		3,057.00
Օտարում (վաճառք)	(1,568.00)		(643.00)			-2,211.00
Մնացորդն առ 30.06.2024թ.	**10,639.00**	**15,049.00**	**8,881.00**	**4,458.00**	**198.00**	**39,225.00**
Զուտ հաշվեկշռային արժեքն առ 31.12.2023թ.	**438.00**	**25,355.00**	**3,148.00**	**1,159.00**	**0.00**	**30,100.00**
Զուտ հաշվեկշռային արժեքն առ 30.06.2024թ.	**224.00**	**22,979.00**	**2,405.00**	**892.00**	**0.00**	**26,500.00**

Ծանոթագրություն 23. «Այլ ակտիվներ»

Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով		
Դեբիտորական պարտքեր մատակարարների գծով		
Կանխավճարներ աշխատակիցներին		
Կանխավճարներ մատակարարներին	797.00	512.00
Կանխավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով	3,563.00	3,602.00
Այլ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	8,415.00	
Ընդամենը	**12,775.00**	**4,114.00**

Ծանոթագրություն 24. «Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ»

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
ՀՀ կենտրոնական բանկ ավանդներ և փոխառություններ ռեպո համաձայնագրեր այլ		
ՀՀ բանկեր ավանդներ և փոխառություններ Բանկերից ստացված վարկեր ռեպո համաձայնագրեր այլ	7,167,669.00	6,276,072.00
Հաշվեգրված տոկոսներ	13,237.00	9,718.00
Ընդամենը	**7,180,906.00**	**6,285,790.00**

Ծանոթագրություն 25. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձանց նկատմամբ		
Ռեպո համաձայնագրեր		
Փոխառություններ	123,456.00	359,085.00
Հաշվեգրված տոկոսներ	2,203.00	8,572.00
Ընդամենը	**125,659.00**	**367,657.00**

Ծանոթագրություն 30. Այլ Պարտավորություններ

Այլ պարտավորություններ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	4,694.00	1,562.00
Պարտավորություններ աշխատակիցների նկատմամբ աշխատավարձի գծով		
Կրեդիտորական պարտքեր մատակարարների նկատմամբ	1,293.00	1,304.00
Այլ պարտավորություններ	1,299.00	1,299.00
Մնացորդը ժամանակաշրջանի վերջում	**7,286.00**	**4,165.00**

30.1 Ներդրումային ընկերության իրավական պարտավորությունները

Ընկերությունը իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում և իր իրավական պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումների անհրաժեշտություն չկա:

30.2 Ներդրումային ընկերության հարկային պարտավորությունները

Ընկերությունն ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները և իր հարկային պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումների անհրաժեշտություն չկա:

Ծանոթագրություն 31.»Կանոնադրական կապիտալ»

1) Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը 30.06.2024թ. դրությամբ կազմում է 350.000.000 ՀՀ դրամ,
2) Ընկերության սեփական կապիտալում պահուստների մասը ընդգրկում է պահուստային կապիտալը, որը կազմում է 37.500.000 ՀՀ դրամ,
3) Ընկերության կողմից իր գործունեության ընթացքում չի կատարվել սեփական բաժնեմասերի հետ գնում և վերավաճառք,
4) հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներդրումային ընկերության նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ.,

Նշանակալից մասնակցի անունը,ազգանունը/անվանումը	Ներդրումային ընկերությունում ունեցած մասնակցության գումարը	Ներդրումային ընկերությունում ունեցած մասնակցության չափը տոկոսային հարաբերությամբ	Մասնակցի գործունեության տեսակը (իրավաբանական անձանց համար)
Փսոմաս Մարինա	350 000 000	100%	

6) հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է կանոնադրական կապիտալի ավելացում,

7) հաշվետու ժամանակաշրջանում կանոնադրական կապիտալի նվազում չի կատարվել,

8) հաշվետու ժամանակաշրջանում ներդրումային ընկերության կողմից չեն հայտարարվել և վճարվել շահութաբաժիններ:

Ծանոթագրություն 31.1. «Պահուստներ»

Գլխավոր Պահուստ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Սկզբնական մնացորդ	**37,500.00**	**37,500.00**
Պահուստին կատարված մասհանումներ		
Պահուստի օգտագործում		
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		
Վերջնական մնացորդ	**37,500.00**	**37,500.00**
Վերագնահատման Պահուստ		
Սկզբնական մնացորդ	26,623.00	142.00
Ավելացում	126,774.00	26,481.00
Նվազեցում		
Վերջնական մնացորդ	**153,397.00**	**26,623.00**

Ծանոթագրություն 31.2. «Չբաշխված շահույթ»

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Սկզբնական մնացորդ	**268 344**	**421 217**
Ավելացում		
Նվազեցում	(41 989)	(152 873)
Վերջնական մնացորդ	**226 355**	**268 344**

Ծանոթագրություն 35. «Կապիտալի այլ տարրեր»

Ընկերությունը 2024թ. Հունիսի 30-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող կապիտալի այլ տարրեր չի ունեցել:

Ծանոթագրություն 36. «Գործարքներ կապակցված կողմերի հետ»

Կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս:

Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա մասնակիցները, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք :

Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմեր են համարվում՝

- ✓ Ընկերության ղեկավարները,
- ✓ Ընկերության կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձիք,
- ✓ առաջին և երկրորդ կետերում նշված անձանց հետ փոխկապակցված ֆիզիկական և իրավաբանական անձիք :

Ընկերությունը որևէ խմբի անդամ չէ :

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը կապակցված կողմերի հետ չի իրականացրել այնպիսի գործարքներ, որոնց պայմանները և տոկոսադրույքները գործող շուկայական պայմաններից առավել բարենպաստ են համարվել:

Ներդրումային ընկերությունը իր գործունեության ընթացքում իրականացրել է գործարքներ կապակցված կողմերի հետ. տրվել են փոխառություններ,կատարվել են տարածքների վարձակալության վճարումներ: Նշված գործարքները իրականացվել են տվյալ պահին շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Գործարքներ ղեկավար անձնակազմի հետ

«Հիմնական աշխատողներին տրվող աշխատավարձ» հոդվածում ներառված ղեկավար անձնակազմի ընդհանուր վարձատրությունը 2024թ Հունիսի 30-ի դրությամբ կազմել է մոտ 20 000 հազար դրամ :

Ծանոթագրություն 37. «Ֆինանսական ռիսկերի վերաբերյալ նվազագույն բացահայտումներ»

Ընկերությունը կարևորում է ռիսկերի կառավարման գործընթացը, որի նպատակն է ֆինանսական կարուստների կրճատումը և իրականացվող գործառնությունների հուսալիության ապահովումը:

Ընկերության գործունեությունը առնչվում է հետևյալ ֆինանսական ռիսկերի հետ:

- ✓ վարկային (պարտքային) ռիսկ,
- ✓ շուկայական ռիսկ.
- ✓ գնային ռիսկ,
- ✓ տոկոսային ռիսկ,

37.1 Պարտքային ռիսկ

Վարկային (պարտքային) ռիսկը գործընկերոջ կողմից իր ստանձնած պարտավորությունները (այդ թվում թողարկած արժեթղթերի գծով) ժամանակին և լրիվությամբ չկատարելու ռիսկն է, որը գնահատվում է պարտքի և տոկոսային վճարումների ընդհանուր գումարով,

Վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են Ընկերության ակտիվները, հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները:

37.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկի վերլուծություն

Շուկայական ռիսկը Ընկերության կողմից շուկայական գների փոփոխության հետևանքով կարուստներ կրելու վտանգն է, որը կապված է տոկոսադրույքների նկատմամբ զգայուն ակտիվների ու պասիվների և կապիտալի գործիքների հետ :

Շուկայական ռիսկը իր մեջ ներառում է արտարժութային, տոկոսադրույքների փոփոխման և գնային ռիսկերը :

Արտարժութային ռիսկի կառավարումն իրականացվում է արտարժույթների փոխարժեքների փոփոխություններով պայմանավորված օգուտներ ստանալու (կորուստներ չկրելու) տեսանկյունից:

Արտարժութային ռիսկի կառավարման գործընթացը ներառում է՝ արտարժութային շուկայի ուսումնասիրման, արտարժութային ռիսկի կանխատեսման, գնահատման՝ ռիսկի հնարավոր չափերի և հետևանքների որոշման, արտարժութային ռիսկի հետ կապված կարուստների կանխարգելման և նվազեցման փուլերը: Արժութային շուկայի վերլուծության գնահատականները Ընկերությունում արվում են՝ հիմք ընդունելով տարբեր տեղեկատվական համակարգերով ստացված տեղեկատվությունը, միջազգային ինտերնետային կայքերի վերլուծական տեղեկատվությունները՝ կիրառելով վերլուծության երկու մեթոդ՝ ֆունդամենտալ և տեխնիկական: Ֆունդամենտալ վերլուծությունը ենթադրում է շուկայի վերլուծություն՝ տնտեսությունը բնութագրող տարբեր ցուցանիշների դինամիկայի, ինչպես նաև քաղաքական իրադարձությունների, օրենսդրական դաշտի փոփոխությունների հիման վրա: Կանխատեսումների իրականացման համար հիմք են հանդիսանում երկարաժամկետ հատվածում փոխարժեքի վրա ազդող երկրի տնտեսական պայմանները: Տեխնիկական վերլուծությունը ենթադրում է գների նախկին դինամիկայի հիման վրա գների ապագա փոփոխությունների կանխատեսումը: ՈՒսումնասիրվում են փոխարժեքների տատանման միտումները կամ տրենդները, վերլուծության են ենթարկվում փոխարժեքների տատանումների դրսևորումները :

37.3 Արտարժույթի ռիսկ

Արտարժութային ռիսկը արժութային փոխարժեքի անբարենպաստ փոփոխության ռիսկն է, որն իր մեջ ներառում է փոխարժեքների, դրանց տատանողականության փոփոխության, տարբեր փոխարժեքների միջև հարաբերակցության փոփոխության ռիսկերը:

Ակտիվները կամ պարտավորությունները պարունակում են արտարժութային ռիսկ, երբ դրանց մեծությունները, դրանց գծով ստացվելիք կամ վճարվելիք գումարները դրամային արտահայտությամբ ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել արտարժույթի[a] Հայաստանի Հանրապետության դրամի նկատմամբ փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված:

Արտարժութային ռիսկի կառավարումն իրականացվում է արտարժույթների փոխարժեքների փոփոխություններով պայմանավորված օգուտներ ստանալու (կորուստներ չկրելու) տեսանկյունից:

Արտարժութային ռիսկի կառավարման գործընթացը ներառում է՝ արտարժութային շուկայի ուսումնասիրման, արտարժութային ռիսկի կանխատեսման, գնահատման՝ ռիսկի հնարավոր չափերի և հետևանքների որոշման, արտարժութային ռիսկի հետ կապված կարուստների կանխարգելման և նվազեցման փուլերը : Արժութային շուկայի վերլուծության գնահատականները Ընկերությունում արվում են՝ հիմք ընդունելով տարբեր տեղեկատվական համակարգերով ստացված տեղեկատվությունը, միջազգային ինֆտերնետային կայքերի վերլուծական տեղեկատվությունները՝ կիրառելով վերլուծության երկու մեթոդ՝ ֆունդամենտալ և տեխնիկական: Ֆունդամենտալ վերլուծությունը ենթադրում է շուկայի վերլուծություն՝ տնտեսությունը բնութագրող տարբեր ցուցանիշների դինամիկայի, ինչպես նաև քաղաքական իրադարձությունների, օրենսդրական դաշտի փոփոխությունների հիման վրա: Կանխատեսումների իրականացման համար հիմք են հանդիսանում երկարաժամկետ հատվածում փոխարժեքի վրա ազդող երկրի տնտեսական պայմանները: Տեխնիկական

վերլուծությունը ենթադրում է գների նախկին դինամիկայի հիման վրա գների ապագա փոփոխությունների կանխատեսումը: ՈՒսումնասիրվում են փոխարժեքների տատանման միտումները կամ տրենդները, վերլուծության են ենթարկվում փոխարժեքների տատանումների դրսևորումները :

Հաշվետու ժամանակաշրջան

	ՀՀ դրամ	I խմբի արտ-արժույթ	II խմբի արտ-արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում				
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսասական կազմակերպությունների նկատմամբ	20,865.00			
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	125,659.00			
Հաճախորդների նկատմամբ պահանջներ				
Վաճառքի համար մատչելի ֆինանասական ակտիվներ	3,100,386.00			
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	4,794,918.00			
Այլ	39,275.00			
Ընդամենը ակտիվներ	**8,081,103.00**			
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսասական կազմակերպությունների նկատմամբ	7,180,906.00			
Պարտավորություններ հաճա խորդների նկատմամբ	125,659.00			
Այլ պարտավորություններ	7,286.00			
Ընդամենը պարտավորություններ	**7,313,851.00**			
Զուտ դիրք	**767,252.00**			

Նախորդ հաշվետու ժամանակաշրջան.

	ՀՀ դրամ	I խմբի արտ-արժույթ	II խմբի արտ-արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում				
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսասական կազմակերպությունների նկատմամբ	10,619.00			
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	367,657.00			
Հաճախորդների նկատմամբ պահանջներ				
Վաճառքի համար մատչելի ֆինանասական ակտիվներ	2,112,455.00			
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	4,815,134.00			
Այլ	34,214.00			
Ընդամենը ակտիվներ	**7,340,079.00**			
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսասական կազմակերպությունների նկատմամբ	6,285,790.00			
Պարտավորություններ հաճա խորդների նկատմամբ	367,657.00			
Այլ պարտավորություններ	4,165.00			
Ընդամենը պարտավորություններ	**6,657,612.00**			
Զուտ դիրք	**682,467.00**			

37.4.Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի փոփոխությունն ուղղակիորեն ազդում է ներդրումային ընկերության տոկոսային ռիսկի, ակտիվների ու պարտավորությունների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Այդ պատճառով, ակտիվների և պարտավորությունների տոկոսադրույքների վերանայման ժամկետայնության վերլուծությունը թույլ է տալիս ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին վերլուծել ներդրումային ընկերության տոկոսադրույքի ռիսկը և, հետևաբար, ակնկալվող օգուտները կամ վնասները:

Տոկոսային ռիսկը փոխառու կապիտալի շուկայում անբարենպաստ փոփոխությունների ռիսկն է, որը իր մեջ ներառում է տոկոսադրույքների փոփոխության, եկամտաբերության կորի տեսքի փոփոխության, տոկոսադրույքների տատանողականության փոփոխության, տարբեր տոկոսադրույքների միջև հարաբերակցության փոփոխության ռիսկերը:
Տոկոսադրույքի ռիսկը հաշվարկվում է որպես տոկոսադրույքի հատուկ ռիսկի և ընդհանուր ռիսկի հանրագումար, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով[a]
ՏՌ = ՏՀՌ+ՏԸՌ,
որտեղ՝

- ✓ ՏՌ - տոկոսադրույքի ռիսկն է,
- ✓ ՏՀՌ - տոկոսադրույքի հատուկ ռիսկն է,
- ✓ ՏԸՌ - տոկոսադրույքի ընդհանուր ռիսկն է:

Տոկոսադրույքի հատուկ և ընդհանուր ռիսկերը հաշվարկվում են առևտրական նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերի նկատմամբ: Ընդ որում, պարտքային արժեթղթերը դիրքերի հաշվարկում ընդգրկվում են ընթացիկ շուկայական արժեքով:

Պարտքային արժեթղթերի դիրքը Ընկերության պարտքային արժեթղթերի (ներառյալ հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած պարտքային արժեթղթերի) և որպես պարտավորություն հանդիսացող պարտքային արժեթղթերի (ներառյալ[a] հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած պարտքային արժեթղթերի) մեծությունների տարբերությունն է: Պարտքային արժեթղթերի դիրքերը սահմանվում են.

ա. երկար, եթե տարբերությունը մեծ է զրոյից,

բ. կարճ, եթե տարբերությունը փոքր է զրոյից,

գ. փակ, եթե տարբերությունը հավասար է զրոյի:

Պարտքային արժեթղթերի համախառն դիրքը հաշվարկվում է որպես պարտքային արժեթղթերի երկար և կարճ դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար:

Տոկոսադրույքի հատուկ ռիսկի հաշվարկման նպատակով պարտքային արժեթղթերի յուրաքանչյուր խմբի նկատմամբ իրականացվում է պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկ:

Դիրքերի հաշվարկից հետո հաշվարկվում է պարտքային արժեթղթերի համախառն դիրքը, որն էլ տոկոսադրույքի հատուկ ռիսկի մեծությունն է:

Համախառն դիրքի հաշվարկում պարտքային արժեթղթերը տարբերակված կշիռներով ընդգրկելու նպատակով դասակարգվում են հետևյալ դասերի:

Պարտքային արժեթղթերի դասերն են.

- պետական պարտքային արժեթղթեր՝ պետությունների/կառավարությունների, կենտրոնական բանկերի և տեղական կառավարման մարմինների պարտքային արժեթղթեր,
- հուսալի պարտքային արժեթղթեր: Հուսալի պարտքային արժեթղթերի թվին են դասվում միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտքային արժեթղթերը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների և օտարերկրյա բանկերի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի պարտքային արժեթղթերը, օտարերկրյա բանկի կողմից թողարկված /ԲԲԲ-/Բաա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող պարտքային արժեթղթերը, օտարերկրյա ոչ բանկ կազմակերպության կողմից թողարկված /Ա-/Ա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող պարտքային արժեթղթերը, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից 'Բ-' և ավելի բարձր վարկանիշ ստացած ոչ բանկ կազմակերպությունների պարտքային արժեթղթերը,

- այլ պարտքային արժեթղթեր, որոնք չեն դասվում պետական պարտքային և հուսալի պարտքային արժեթղթերի շարքին:

Հաշվետու ժամանակաշրջան

Հոդվածի անվանումը	**մինչև 1 ամիս**		**1-ից մինչև 3 ամիս**		**1-ից մինչև 5 տարի**		**5 տարուց ավելի**	
	դրամով	իսլամական	դրամով	իսլամական	դրամով	իսլամական	դրամով	իսլամական
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝	**20,865.00**							
վարկեր								
ավանդներ								
ռեպո համաձայնագրեր								
դրամական միջոցներ	20,865.00							
Հաճախորդների նկատմամբ պահանջներ, այդ թվում[a]	**0.00**							
վարկեր								
ռեպո համաձայնագրեր								
այլ								
Ծահույթ կամ վնասի միջ. Չափվող և Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ					1,957,154.00		1,268,891.00	
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական Ակտիվներ					432,122.00		4,362,797.00	
Տեղաբաշխված այլ միջոցներ	39,275.00							
Ընդամենը	**60,140.00**	**0.00**	**0.00**	**0.00**	**2,389,276.00**	**0.00**	**5,631,688.00**	**0.00**
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝								
վարկեր								
ռեպո համաձայնագրեր	7,180,906.00							
Ներգրաված այլ միջոցներ	125,659.00							
Այլ	7,286.00							
Ընդամենը	**7,313,851.00**	**0.00**	**0.00**	**0.00**	**0.00**	**0.00**	**0.00**	**0.00**
Զուտ դիրք	**-7,253,711.00**	**0.00**	**0.00**	**0.00**	**2,389,276.00**	**0.00**	**5,631,688.00**	**0.00**

Նախորդ ժամանակաշրջան

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		1-ից մինչև 5 տարի		5 տարուց ավելի	
	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝	10,619.00							
վարկեր								
ավանդներ								
ռեպո համաձայնագրեր								
դրամական միջոցներ	10,619.00							
Հաճախորդների նկատմամբ պահանջներ, այդ թվում[a]	**0.00**							
վարկեր								
ռեպո համաձայնագրեր								
այլ								
Շահույթ կամ վնասի միջ. Չափվող և Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ					**1,177,754.00**		**1,302,358.00**	
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական Ակտիվներ					437,740.00		4,377,395.00	
Տեղաբաշխված այլ միջոցներ	34,214.00							
Ընդամենը	**44,833.00**	**0.00**	**0.00**	**0.00**	**1,615,494.00**	**0.00**	**5,679,753.00**	**0.00**
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝								
վարկեր								
ռեպո համաձայնագրեր	6,285,790.00							
Ներգրաված այլ միջոցներ	367,657.00							
Այլ	4,165.00							
Ընդամենը	6,657,612.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
Զուտ դիրք	**-6,612,779.00**	**0.00**	**0.00**	**0.00**	**1,615,494.00**	**0.00**	**5,679,753.00**	**0.00**

Ներդրումային ընկերության կողմից ներկայացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ տոկոսաբեր/տոկոսակիր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար գործող միջին տոկոսադրույքները.

Հոդվածի անվանումը	Հաշվետու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ		Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ	
	ՀՀ դրամ	Արտարժույթ	ՀՀ դրամ	Արտարժույթ
	%	%	%	%
Ակտիվներ				
Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում				
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում[a] -վարկեր -ռեպո համաձայնագրեր - սվոպ				
Հաճախորդների նկատմամբ պահանջներ	0.00		0	
Շահույթ կամ վնասի միջ. Չափվող և Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	10.97		11.21	
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	8.50		8.50	
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	8.71		9.95	
Պարտավորություններ հաճա-խորդների նկատմամբ				
Պարտավորություններ ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթերի գծով				

37.5 Գնային ռիսկ

Շուկայական գների փոփոխությունը մեծապես ազդում է ֆինանսական գործիքների արժեքի վրա, ընդ որում, այդ փոփոխությունները կարող են պայմանավորված լինել ինչպես առանձին արժեթղթերին կամ նրանց թողարկողներին հատուկ գործոններով, այնպես էլ շուկայում շրջանառվող բոլոր արժեթղթերի վրա ազդող ընդհանուր գործոններով:

Գնային ռիսկը ֆոնդային շուկայում անբարենպաստ փոփոխությունների ռիսկն է, որն իր մեջ ներառում է արժեթղթերի գների փափախության, արժեթղթերի գների տատանողականության, տարբեր արժեթղթերի և ինդեքսների միջև գնային հարաբերակցության փոփոխության ռիսկերը:

Գնային ռիսկը հաշվարկվում է առևտրական նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների (բաժնային արժեթղթերի) նկատմամբ:

Կապիտալի գործիքների դիրքը, որպես ակտիվ հանդիսացող կապիտալի գործիքների (ներառյալ[a] հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած կապիտալի գործիքների) և որպես պարտավորություն հանդիսացող կապիտալի գործիքների (ներառյալ[a] հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած կապիտալի գործիքների) մեծությունների տարբերությունն է: Կապիտալի գործիքների դիրքերը սահմանվում են[a]

ա. երկար, եթե տարբերությունը մեծ է զրոյից,

բ. կարճ, եթե տարբերությունը փոքր է զրոյից,

գ. փակ, եթե տարբերությունը հավասար է զրոյի:

Կապիտալի գործիքների համախառն դիրքը հաշվարկվում է որպես կապիտալի գործիքների տարբեր դիրքերի (երկար և կարճ) բացարձակ մեծությունների հանրագումար:

Կապիտալի գործիքների համախառն զուտ դիրքը հաշվարկում է որպես կապիտալի գործիքների երկար դիրքերի հանրագումարի և կարճ դիրքերի հանրագումարի (բացարձակ մեծությամբ) միջև տարբերություն:

Կապիտալի գործիքները դիրքերի հաշվարկում ընդգրկվում են ընթացիկ շուկայական արժեքով:

37.6. Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը Ընկերության կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման ունակության մասնակի կամ ամբողջությամբ կորստի վտանգն է :

Իրացվելիության ռիսկերը ի հայտ են գալիս անբավարար իրացվելիության կամ շուկայականից առավել բարձր արժեքով ձեռք բերված արդյունքում, իֆչը արտահայտվում է այնուհետև Ընկերության եկամուտներում և ծախսերում: Առաջանում է այն ժամանակ, երբ Ընկերությունը չի կարողանում վերահսկել պասիվների կրճատումը և ապահովել ակտիվների աճ : Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ ընկերության իրացվելի ակտիվները չեն բավականացնի ընկերության պարտավորությունները կատարելու համար : Իրացվելիության ռիսկի կառավարումը ընթացիկ ժամանակահատվածում կապված է ակտիվների և պասիվների կառավարման արդյունավետ խնդրի լուծման հետ՝ ստանալ առավելագույն շահութ, պահպանելով իրացվելջության անհրաժեշտ մակարդակը :

Իրացվելիության ռիսկի կառավարումը ակնկալում է .

- ✓ -կանխիկ հոսքերի վերլուծություն
- ✓ -ակտիվների և պարտավորությունների դասակարգում ըստ պայմանագրային ժամկետների
- ✓ -շուկայի մոնիտորինգ :

Ընկերությունում իրացվելիության կառավարման հիմնական մեթոդ է հանդիսանում ակտիվների կառավարման մեթոդը :

Իրացվելիության առաջնային աղբյուրները Ընկերության դրամարկղն է և հաշվարկային հաշիվներում առկա միջոցները: Իրացվելիության երկրորդային աղբյուրները բարձր իրացվելի եկամտաբեր ակտիվներն են, որոնք կարճ ժամկետում և նվազագույն կորուստների ռիսկով կարելի է փոփոխել կանխիկ դրամական միջոցների : Դրանք ձևավորվում են ՀՀ պետական գանձապետական արժեթղթերից :

Իրացվելիության կառավարման համար կիրառում են նաև իրացվելի ակտիվները վաճառելու մեթոդը, երբ իրացվելիության ցածր մակարդակի դեպքում Ընկերությունը դրամական միջոցներ ստանալու նպատակով վաճառում է ակտիվներ և պարտավորությունների կառավարման մեթոդն է, որը ենթադրում է ֆինանսական շուկայում արտաքին փոխառությունների, վարկերի, ռեպո-համաձայնագրերի միջոցով փոխառու միջոցների ներգրավվում ու ակտիվների և պարտավորությունների միջև անհրաժեշտ հարաբերակցության հաստատում: Իրացվելիության ռիսկը կառավարելու և վերահսկելու նպատակով Ընկերությունը պարբերաբար կատարում է ընթացիկ և ժամկետային իրացվելիության մոնիտորինգ՝ արտաքին միջավայրի փոփոխության դեպքում իրացվելիության լավագույն իրավիճակին հասնելու համար:

Հաշվետու ժամանակաշրջան						
	մինչև 1ամիս	**1-ից մինչև 3 ամիս**	**3-ից մինչև 6 ամիս**	**6-ից մինչև 1 տարի**	**1 տարուց ավել**	**Ընդամենը**
Ակտիվներ						
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում						**0.00**
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսասական կազմակերպությունների նկատմամբ	37,972.00					**37,972.00**
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ					129,684.00	**129,684.00**
Հաճախորդների նկատմամբ պահանջներ						**0.00**
Վաճառքի համար մատչելի ֆինանասական ակտիվներ					2,900,928.00	**2,900,928.00**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ					4,724,763.00	**4,724,763.00**
Այլ	32,711.00					**32,711.00**
Ընդամենը ակտիվներ	**70,683.00**	**0.00**	**0.00**	**0.00**	**7,755,375.00**	**7,826,058.00**
Պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ	6,902,740.00					**6,902,740.00**
Պարտավորություններ հաճա խորդների նկատմամբ	129,679.00					**129,679.00**
Այլ պարտավորություններ	1,529.00					**1,529.00**
Ընդամենը պարտավորություններ	**7,033,948.00**	**0.00**	**0.00**	**0.00**	**0.00**	**7,033,948.00**

Նախորդ ժամանակաշրջան						
	մինչև 1ամիս	**1-ից մինչև 3 ամիս**	**3-ից մինչև 6 ամիս**	**6-ից մինչև 1 տարի**	**1 տարուց ավել**	**Ընդամենը**
Ակտիվներ						
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում						**0.00**
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսասական կազմակերպությունների նկատմամբ	10,619.00					**10,619.00**
Ծահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ					367,657.00	**367,657.00**
Հաճախորդների նկատմամբ պահանջներ						**0.00**
Վաճառքի համար մատչելի ֆինանասական ակտիվներ					2,112,455.00	**2,112,455.00**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ					4,815,134.00	**4,815,134.00**
Այլ	34,214.00					**34,214.00**
Ընդամենը ակտիվներ	**44,833.00**	**0.00**	**0.00**	**0.00**	**7,295,246.00**	**7,340,079.00**
Պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ	6,285,790.00					**6,285,790.00**
Պարտավորություններ հաճա խորդների նկատմամբ	367,657.00					**367,657.00**
Այլ պարտավորություններ	4,165.00					**4,165.00**
Ընդամենը պարտավորություններ	**6,657,612.00**	**0.00**	**0.00**	**0.00**	**0.00**	**6,657,612.00**

Ծանոթագրություն 38. «Կապիտալ և կապիտալի համարժեքություն»

ԱՄԻՍՆԵՐ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ	ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՆՈՐՄԱՏԻՎԻ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԸ	ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	Համարժեքային նորմատիվի մեծություն
ՀՈՒՆՎԱՐ	687,549,000.00	654,637,000.00	300,000,000.00	350,000,000.00	17.36
ՓԵՏՐՎԱՐ	745,286,000.00	644,598,000.00	300,000,000.00	350,000,000.00	18.24
ՄԱՐՏ	787,347,000.00	636,480,000.00	300,000,000.00	350,000,000.00	20.28
ԱՊՐԻԼ	791,801,000.00	629,911,000.00	300,000,000.00	350,000,000.00	22.06
ՄԱՅԻՍ	787,117,000.00	642,244,000.00	300,000,000.00	350,000,000.00	25.06
ՀՈՒՆԻՍ	782,838,000.00	635,326,000.00	300,000,000.00	350,000,000.00	22.55

Ծանոթագրություն 39. «Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք»

Ընկերության գնահատմամբ իր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները էականորեն չեն տարբերվում իրենց հաշվեկշռային արժեքներից :

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ նրանց շուկայական գնանշման վրա, առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները: Եթե շուկայական գնանշումը հասանելի չէ, գործիքի իրական արժեքը չափվում է կիրառելով գնորոշման մոդելներ կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկան:

Երբ կիրառվում է զեղչված դրամական հոսքերի տեխնիկան, գնահատված ապագա դրամական հոսքերը հիմնված են ղեկավարության լավագույն գնահատականների հիման վրա և զեղչման դրույքը նմանատիպ պայմաններով գործիքի տոկոսադրույքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Երբ գնորոշման մոդելներն են կիրառվում, ներմուծվող փոփոխականները հիմնված են հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական համապատասխան փոփոխականների վրա:

Ընկերության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. Ծահույթի կամ վնասի միջոցով չափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:

Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Ընկերության ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա, հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության հնարավորության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Ֆիքսված մարման ժամկետով արժեթղթերը դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, երբ Ընկերությունը հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը :

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Ընկերությունը մտադիր է պահել անորոշ ժամկետով և որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույքներում, փոխարժեքներում կամ գներում փոփոխությունների դեպքում: Այլ

համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով:

Ակտիվ ֆինանսական շուկաներում գործող ֆինանսական ակտիվի իրական արժեքը հաշվետու ամսաթվին բորսայի փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գինն է : Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը հաշվառվում է ինքնարժեքով:

Ծանոթագրություն 40. «Կանխատեսվող ապագա գործարքների հեջավորում»

Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանում չունի այնպիսի ֆինանսական գործիք, որը հաշվառվում է որպես կանխատեսված ապագա գործարքների հետ կապված հեջ:

Ծանոթագրություն 41. «Ապաճանաչում»

Ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է, երբ վերանում է ակտիվի իրավունքի պահանջը: Ընկերության հաշվեկշռում ապաճանաչված ֆինանսական ակտիվ չի հաշվառվում:

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ նա մարվում է, համարվում է չեղյալ կամ դառնում է ժամկետանց: Ընկերության հաշվեկշռում ապաճանաչված ֆինանսական պարտավորություն չի հաշվառվում:

Ծանոթագրություն 42. «Գրավադրված ակտիվներ»

2024թ. Հունիսի 30-ի դրությամբ չունի գրավադրված ակտիվներ:

Ծանոթագրություն 43. «Ընդունված գրավ»

2024թ. Հունիսի 30-ի դրությամբ «Ալֆասեքյուրիթիզ» ՍՊԸ-ն չունի ընդունված գրավ, ունի 100 000 000 ՀՀ դրամ անվանական արժեքով ՀՀ պետական պարտատոմսեր համաձայն փոխառության համաձայնագրի

Ծանոթագրություն 44. «Պարտավորությունների չկատարում/խախտում»

«Ալֆասեքյուրիթիզ» ՍՊԸ-ն 2024թ. Հունիսի 30-ի դրությամբ հաշվեկշռում չունի հաշվառված այնպիսի պարտավորություններ, որոնց գծով պայմանագրային պարտավորությունները Ընկերության կողմից խախտվել են: Հաշվետու ժամանակաշրջանում ներդրումային ընկերության կողմից որևէ պայմանագրային պարտավորություն չի խախտվել:

Գործադիր տնօրեն Գ. Գրիգորյան

Գլխավոր հաշվապահ Ք. Քարամյան